ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՏԻ ՄԱՐԶԻ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Պարույր Սևակ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Պարույր Սևակ, (093)888278, paruyrsevak.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՀՈՒՆՎԱՐԻ 2018թվականի N 1

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 08.01.2018 ԹՎԱԿԱՆԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14 հոդվածով Պարույր Սևակ համայնքի ավագանին

ո ր ո շ ե ց

Հաստատել 08.01.2018 թվականի նիստի օրակարգը՝

1. Պարույր Սևակ համայնքի ավագանու 22.12.2017թ-ի թիվ 31-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

2. Պարույր Սևակ համայնքի 2018թ-ի բյուջեն հաստատելու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ
2. ԹՈՐՈՍՅԱՆ ՌԱԴԻԿ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ
4. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՋՈՐԱՅՐ
5. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ

Համայնքի ղեկավար՝ **Էդուարդ Ստեփանյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՏԻ ՄԱՐԶԻ

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Պարույր Սևակ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Պարույր Սևակ, (093)888278, paruyrsevak.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՀՈՒՆՎԱՐԻ 2018թվականի N 2-Ն

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 22.12.2017 Թ-Ի ԹԻՎ 31-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածով, «Տեղական տուրքերի ու վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ և 14-րդ հոդվածներով Պարույր Սևակ համայնքի ավագանին

ո ր ո շ ե ց

համայնքի ավագանու 22.12.2017թ-ի՝ 2018թ-ի համար տեղական տուրքերի և վճարների հաստատման մասին թիվ 31-Ն որոշումը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
հաստատել Պարույր Սևակ համայնքի տարածքում 2018թ-ի համար տեղական տուրքերի ու վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1. տեղական տուրքերի համար.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ չորս հազար հինգ հարյուր դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ ինը հազար դրամ,

- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,

- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,

- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ ինը հարյուր դրամ,

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հազար հինգ հարյուր դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ ինը հարյուր դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ հազար հինգ հարյուր դրամ.

4) համայնքի վարչական տարածքում, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կողեզրում՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի

կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ քսան հազար դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երկու հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնմեկ հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնչերս հազար դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսաներկու հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեսուն հազար դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վաթսուն հազար դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև երկու հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնմեկ հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնչորս հազար դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսաներկու հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեսուն հազար դրամ.

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վաթսուն հազար դրամ.

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով

սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ տաս հազար դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ երեսուն հազար դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ երեք հարյուր հազար դրամ,

դ. խաղատների համար՝ վեց հարյուր հազար դրամ,

ե. շահումով խաղերի համար՝ չորս հարյուր հազար դրամ,

զ. վիճակախաղերի համար՝ հարյուր տաս հազար դրամ.

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ վեց հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասներկու հազար դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնութ հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսանհինգ հազար դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քառասուն հազար դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հարյուր դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար երկու հարյուր դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հազար դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տաս հազար դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսան հազար դրամ.

11) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում

տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

12) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տասը հազար դրամ.

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հինգ հարյուր հազար դրամ.

15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ յոթ միլիոն դրամ,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ տասը միլիոն դրամ:

2. տեղական վճարների համար.

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել երեք հազար դրամ.

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել հինգ հազար դրամ.

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել հինգ հազար դրամ.

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել երկու հազար դրամ.

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել հազար դրամ.

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել հազար դրամ.

7) համայնքի տարածքում ջրամատակարարման և ջրահեռացման վճար սահմանել ութսուն դրամ մեկ խ.մ. ջրի համար.

8) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել զրո դրամ .

9) համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել զրո դրամ.

10) համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող՝ ավագանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմանված և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայր կահավորված տարածքում ընտանեկան կամ գործնական միջոցառումներ անցկացնելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել հազար դրամ.

11) համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց վճար սահմանել զրո դրամ.

12) համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում (բացառությամբ բակային տարածքների, ուսումնական, կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի հարակից տարածքների) ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար տեղական վճար սահմանել զրո դրամ.

13) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ հինգ հարյուր դրամ փոխհատուցման վճար:

14) համայնքի տարածքում աղբահանության վճար սահմանել.

- բնակելի նպատակային նշանակության շենքերում՝ ըստ հաշվառված անձանց քանակի՝ յուրաքանչյուր բնակչի համար ամսական 100 դրամ.

- ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և /կամ/ շինություններում՝ ըստ շինության ընդհանուր մակերեսով՝ հետևյալ դրույքաչափերով՝

ա) առևտրի (այդ թվում՝ շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինությունների մասով՝ 1 քմ - 50 դրամ,

բ) հյուրանոցների և հյուրանոցային ծառայություններ իրականացնող այլ հասարակական շինությունների մասով՝ 1 քմ - 20 դրամ,

գ) արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ 1 քմ – 25 դրամ,

դ) կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ 1 քմ - 3 դրամ,

ե) շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի բազմաբնույթ տնտեսական գործունեություն, աղբահանության վճարն ամբողջությամբ հաշվարկվում է առավել բարձր դրույքաչափով: Աղբահանության վճար վճարողի պահանջով (դիմումով) կարող է կատարվել վերահաշվարկ՝ ըստ շինության փաստացի նպատակային օգտագործման (չափերի, քմ) տեղեկությունների տրամադրման ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Տվյալ դեպքում աղբահանության վճարը հաշվարկվում է ըստ փաստացի նպատակային նշանակության օգտագործման չափերի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ
2. ԹՈՐՈՍՅԱՆ ՌԱԴԻԿ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ
4. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՋՈՐԱՅՐ
5. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ

Համայնքի ղեկավար՝ **Էդուարդ Ստեփանյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՏԻ ՄԱՐԶԻ

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Պարույր Սևակ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Պարույր Սևակ, (093)888278, paruyrsevak.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՀՈՒՆՎԱՐԻ 2018թվականի N 3-Ն

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ-Ի ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով Արարատի մարզի Պարույր Սևակ համայնքի ավագանին

ո ր ո շ ե ց

հաստատել համայնքի **2018թ**-ի բյուջեն՝

--եկամուտների մասով **23272456**(քսաներեք միլիոն երկու հարյուր յոթանասուներկու հազար չորս հարյուր հիսունվեց) **դրամ**

--ծախսերի մասով **23272456**(քսաներեք միլիոն երկու հարյուր յոթանասուներկու հազար չորս հարյուր հիսունվեց) -//-

ո ր ի ց

--վարչական բյուջե

--եկամուտների մասով **21503780**(քսանմեկ միլիոն հինգ հարյուր երեք հազար յոթ հարյուր ութսուն) **դրամ**

--ծախսերի մասով **21503780**(քսանմեկ միլիոն հինգ հարյուր երեք հազար յոթ հարյուր ութսուն) -//-

--ֆոնդային բյուջե

--եկամուտների մասով **1768679** (մեկ միլիոն յոթ հարյուր վաթսունութ հազար վեց հարյուր յոթանասունինը) -//-

--ծախսերի մասով **1768679** (մեկ միլիոն յոթ հարյուր վաթսունութ հազար վեց հարյուր յոթանասունինը)) -//-

Համայնքի վարչական բյուջեի

եկամուտներ

որից

--հարկային եկամուտներ **2001080**(երկու միլիոն տաս հազար ութսուն) -//-

որից

--հողի հարկ ֆիզ. անձանցից **333541**(երեք հարյուր երեսուներեք հազար հինգ հարյուր քառասունմեկ) -//-

--հողի հարկ իրավ. անձանցից **222500** (երկու հարյուր քսաներկու հազար հինգ հարյուր) -//-

--գույքահարկ **1400000**(մեկ միլիոն չորս հարյուր հազար) -//-

-- գույքահարկ շինություններից **13039**(տասներեք հազար երեսունինը)

--տեղական տուրքեր 32000(երեսուներկու հազար) -//-
ոչ հարկային եկամուտներ
որից
--հողի վարձավճար 2766000(երկու միլիոն յոթ հարյուր վաթսունվեց հազար) -//-
--տեղական վճար 1300000(մեկ միլիոն երեք հարյուր հազար) -//-
--պաշտոնական դրամաշնորհներ 15436700(տասնհինգ միլիոն չորս հարյուր երեսունվեց հազար յոթ հարյուր) -//-
որից
--դոտացիա 15436700 (տասնհինգ միլիոն չորս հարյուր երեսունվեց հազար յոթ հարյուր) -//-
--վարչական բյուջե
--օրենսդիր և գործադիր մարմիններ
այդ թվում
հոդված 4111 (աշխատավարձ) 9223000(ինը միլիոն երկու հարյուր քսաներեք հազար) -//-
հոդված 4112 (պարգևատրում) 679000 (վեց հարյուր յոթանասունինը հազար) -//-
հոդված 4212 (էներգետիկ ծառ.) 150000(մեկ հարյուր հիսուն հազար) -//-
հոդված 4214 (կապի ծառ.) 126000(մեկ հարյուր քսանվեց հազար) -//-
հոդված 4215 (գույքի ապահովագր.) 32000(երեսուներկու հազար) -//-
հոդված 4221 (ներքին գործուղումներ) 50000(հիսուն հազար) -//-
հոդված 4232 (համակարգչ. ծառ.) 200000(երկու հարյուր հազար) -//-
հոդված 4234 (տեղեկատվ. ծառ.) 120000(մեկ հարյուր քսան հազար) -//-
հոդված 4252 (մեքենաների ընթացիկ նորոգ.) 850000(ութ հարյուր հիսուն հազար) -//-
հոդված 4261 (գրասենյակային նյութեր) 200000(երկու հարյուր հազար) -//-
հոդված 4264 (տրանսպորտային նյութեր) 700000(յոթ հարյուր հազար) -//-
--սոցիալ անապահով անձանց
այդ թվում՝
հոդված 4726 (հողարկավորության նպաստներ) 150000(մեկ հարյուր հիսուն հազար) -//-
հոդված 4729 (այլ նպաստներ) 600000(վեց հարյուր հազար) -//-
կեղտաջրերի հեռացում
այդ թվում
հոդված 4251 (ընթացիկ նորոգում) 400000 (չորս հարյուր հազար)
--ընդհանուր բնույթի հանրային ծառ.
այդ թվում՝
հոդված 4241 (մասնագիտական ծառ.) 200000(երկու հարյուր հազար) -//-
հոդված 4823 (պարտադիր վճար) 8000 (ութ հազար)
Սոցալական հատուկ արտոնություններ
այդ թվում՝
հոդված 4819 (նվիրատվություն) 70000(յոթանասուն հազար) -//-
--աղբահանում և սանիտարական մաքրություն
այդ թվում
հոդված 4213 (կոմունալ ծախսեր) 624000(վեց հարյուր քսանչորս հազար) -//-
հոդված 4264 (տրանսպորտային նյութեր) 260000(երկու հարյուր վաթսուն հազար) -//-
--մշակութ, հանգիստ, կրոն

այդ թվում
հոդված 4269 (հատուկ նպատակային նյութեր) **300000**(երեք հարյուր հազար) -//-
--ջրային կառույցների շահագործում և պահպանում
այդ թվում
հոդված 4251 (ընթացիկ նորոգում) **950000**(ինը հարյուր հիսուն հազար) -//-
հոդված 4269 (հատուկ նյութեր) **250000**(երկու հարյուր հիսուն հազար) -//-
-- փողոցային լուսավորում
այդ թվում
հոդված 4212 (էներգետիկ ծառայություն) **600000** (վեց հարյուր հազար)
--նախադպրոցական կրթություն
այդ թվում
հոդված 4639 (դրամաշնորհներ) **2900000**(երկու միլիոն ինը հարյուր հազար) -//-
--ընդ. բնույթի տնտ. հարաբ.
այդ թվում
հոդված 4241 (մասնագիտական ծառ.) **11000** (տասնմեկ հազար)
պահուստային ֆոնդ
այդ թվում
հոդված 4891(պահուստային միջոց)**1850780** (մեկ միլիոն ութ հարյուր հիսուն հազար յոթ հարյուր ութսուն)-//-
Համայնքի ֆոնդային բյուջե
--եկամուտներ **1768679**(մեկ միլիոն յոթ հարյուր վաթսունութ հազար վեց հարյուր յոթանասունինը) -//-
--ֆոնդային բուջեի մնացորդ **11800**(տասնմեկ հազար ութ հարյուր) -//-
--վարչական բյուջեի մնացորդի փոխանցում ֆոնդային բյուջե **1256879**(մեկ միլիոն երկու հարյուր հիսունվեց հազար ութ հարյուր յոթանասունինը)
--օտարման մուտքեր **500000** (հինգ հարյուր հազար)
--Օրենսդիր և գործադիր մարմիններ
այդ թվում՝
--ընդհանուր բնույթի հանրային ծառայություն
հոդված 5133(գիոդեզաքարտեզագրում)**1768679**(մեկ միլիոն յոթ հարյուր վաթսունութ հազար վեց հարյուր յոթանասունինը) //-

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ
2. ԹՈՐՈՍՅԱՆ ՌԱԴԻԿ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ
4. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՋՈՐԱՅՐ
5. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ

Համայնքի ղեկավար՝ **Էդուարդ Ստեփանյան**